

ՀԱՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԻՈՒՋԱ ՄԿՐՏՁՅԱՆ

Ոճաբանության մեջ յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հեղինակային նորաբանությունները: Դրանք իրավիճակի պահանջով ստեղծված այն ոչ սովորական կազմություններն են, որոնք, որպես կանոն, գոյություն ունեն իրենց ծնող համատեքստում՝ վերջինիս թարմություն ու արտահայտչականություն հաղորդելու համար¹:

Հեղինակային նորաբանությունները ստեղծվում են անհատների կողմից և տարբերվում են բուն նորաբանություններից նրանով, որ չեն անվանում նոր հասկացություններ և ունեն մի շարք կառուցվածքային առանձնահատկություններ: Դրանց քննությունն առնչվում է լեզվի նորմայի, համակարգի, նրա իրական ու պոտենցիալ հնարավորությունների (պոտենցիալ բառերի) ուսումնասիրության հետ:

Պոտենցիալ (հնարավոր) բառերն այն բաղադրյալ կազմություններն են, որոնք ստեղծվել են իրավիճակի պահանջով, տվյալ լեզվին բնորոշ արդյունավետ կաղապարներով, բայց դեռևս չեն կայունացել լեզվում²: Դրանք, փաստորեն, լեզվի բառակազմական հնարավորությունների օրինաչափ իրականացումներն են: Նման բառերը որոշ դեպքերում կարող են ճանապարհ հարթել իրենց համար՝ դառնալով համընդհանուր գործածության բառեր: Պոտենցիալ բառերը, ինչպես նաև հեղինակային նորաբանությունները, ըստ կառուցվածքի, սովորաբար, լինում են բաղադրյալ և իմաստային տեսակետից զերծ են դարձվածայնությունից: Ինչպես՝ վաղդասեբ, հոդմապակի, լուսնագնաց, թեյախըմություն և այլն: Դժվար չէ նկատել, որ նշված բառերը կազմված են ժամանակակից հայերենի համար արդյունավետ՝ գործողության օբյեկտ+գործողություն (վարդասեբ, թեյախմություն), տեղի պարագա+գործողություն (լուսնագնաց), որոշիչ+որոշյալ (հոդմապակի) կաղապարներով:

Հեղինակային նորաբանությունները նույնպես ստեղծվում են իրավիճակի պահանջով, ինչպես արդյունավետ, այնպես էլ պակաս արդյունավետ կաղապարներով: Օրինակ, արեգակնաբիթ, վագրաբեբան, հայրենախոս, անհղալուտ, փառաբաշտ, աստղակույս և այլն:

Հեղինակային նորաբանությունները լինում են բառային, շարահյուսական, ձևաբանական, դարձվածաբանական. ավելի տարածված են բառային նորաբանությունները: Հարցի քննությունն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով հոդվածում կսահմանափակվենք միայն բառային նորաբանությունների քննությամբ:

¹ Е. А. Земская, Современный русский язык, М., 1973, с. 228

² А. И. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956, с. 17—18; О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, с. 343.

Հեղինակային նորաբանությունները հատուկ են խոսքին և միայն համ-
ընդհանուր ճանաչում ստանալուց հետո են վերածվում լեզվի փաստերի: Այս
կապակցությամբ ճիշտ են վարվում այն լեզվաբանները³, որոնք առարկում են
Վ. Ադամսոնի այն դրույթին, թե ոչինչ չկա լեզվում, որը չլինի խոսքում և հա-
կառակը՝ ոչինչ չկա խոսքում, որը չլինի լեզվում⁴: Առաջին տեսակետը կաս-
կած չի հարուցում, իսկ երկրորդի հետ դժվար է համաձայնվել, մանավանդ,
որ վերջին ժամանակներս հակում կա լեզվի և խոսքի հարաբերությունը բա-
ցատրել որպես կոդի և նրանով տրվող հաղորդման հարաբերություն (լեզուն
դիտվում է որպես պայմանական նշանների՝ կոդերի համակարգ), իսկ դրան-
ցով արտահայտվածը՝ հաղորդում: Ոճաբանության մեջ դա արտահայտվում է
հաղորդողի և ընկալողի ոճաբանություն հարաբերությամբ, ուր հաղորդողը
գեղարվեստական ստեղծագործության հեղինակն է, ընկալողը՝ ընթերցողը⁵,
լեզուն ոչ միայն ստեղծում է խոսքը, այլև սնվում է նրանով. այն որպես
մարդկային հաղորդակցման միջոց ապրում և զարգանում է շնորհիվ այն բա-
նի, որ նրանում շարունակ կատարվում են նորացումներ: Դրանք երևան են
շախիս նախ անհատների խոսքում՝ լինի բանավոր, թե գրավոր (վերջինս առա-
վելապես գեղարվեստական ստեղծագործություններում), ապա անցնում լեզ-
վին: Նման նորացումները կարող են ազդել ընկալողի գեղագիտական դգա-
ցումների վրա, և եթե դրանք սկսում են մասսայականություն վայելել, ապա
թափանցում են լեզվական համակարգ, իսկ անհաջողները կարող են ունենալ
միայն մեկ կիրառություն՝ այն էլ այն համատեքստում, որտեղ ծնունդ են
առել:

Հեղինակային նորաբանությունները մեծ մասամբ կազմվում են լեզվի ի-
մաստային, բառակազմական նորմաների խախտումով և հետևանք են ոչ թե
համապատասխան գիտելիքների պակասի, այլ դրանք նպատակադրված, ծրա-
դրված բնույթ են կրում և ավելացնում են տեքստի ոճական հագեցվածությու-
նը: Նկատենք, որ նման թույլատրելի շեղումները վերաբերում են լեզվում գո-
յություն ունեցող «ոչ հաստատուն մեծություններին», այսինքն՝ այնպիսի կա-
նոնների և միավորների, որոնք կարող են ունենալ տարբերակներ⁶: Ընդ որում,
հաստատուն մեծություններ համարվում են լեզվի բոլոր մակարդակներում
գոյություն ունեցող կանոնները, որոնք կազմում են լեզվի կառուցվածքի հիմ-
քը: Դրանց խախտումն անթույլատրելի է և չի կարող տալ որևէ լրացուցիչ
արժեք:

Մյուս կողմից, կան այնպիսի ավանդական նորմաներ, որոնք կարող են
ունենալ տարբերակներ, հաղորդակցման տարբեր պայմաններում դրանք լեզ-
վական միջոցների կիրառման և ընտրության հնարավորություն են ստեղծում,
որոնք ոճաբանության մեջ առանձին կարևորություն են ներկայացնում: Այս-
պես՝ գոյություն ունի լեզվական միավորների համանիշություն, այսինքն՝

³ А. К. Соловьева, Проблема индивидуального говорения («Вопросы языкозна-
ния» (այսուհետև՝ ВЯ), 1962, № 3, с. 93); Ю. М. Скребнев, О разграничении и про-
тивопоставлении понятий «язык и речь» («Вопросы общего и германского языкозна-
ния», Уфа. 1964, с. 8).

⁴ В. Г. Адмони, Основы теории грамматики, М.—Л., 1964, с. 34.

⁵ И. В. Арнольд, И. А. Банников, Лингвистический и стилистический коп-
текст («Стиль и контекст», Л., 1972, с. 1—2).

⁶ R. Fowler, Essays on Style and Language, London, 1966, p. 15.

միևնույն, կամ գրեթե միևնույն իմաստն արտահայտվում է տարբեր միջոցներով, որի պատճառով էլ ստեղծվում է ընտրության հնարավորություն, իսկ վարպետորեն կատարված ընտրությունն ամենից շատ ազդում է լրացուցիչ, հավելյալ իմաստի վրա, որով ստեղծվում է համապատասխան լեզվական միավորի ոճական արժեքը:

Տարբերակներ ունենալու, դրա հետ կապված ընտրության լայն հնարավորություն է տալիս բառային մակարդակը: Որպես ավանդական նշանակություն ընդունվում է ավելի հաճախական, տվյալ պայմաններում ավելի մեծ հավանականություն ունեցող բառը, որը ոճականորեն չեզոք է: Ոճական տեսակետից չեզոք բառի փոխարինումը նրա համանիշներից որևէ մեկով ստեղծում է լրացուցիչ իմաստային, ոճական արժեք, իսկ համատեքստի պահանջով առանձին հեղինակների ստեղծած բառերը, որոնք ավանդական ձևերից ավելի քիչ են հաճախական, համեմատության մեջ դրվելով ավանդական ձևերի հետ. ստեղծում են երկանգամ հակադրություն, ուր ավանդական ձևը դիտվում է որպես ոճականորեն չեզոք, իսկ մյուսը՝ ոճականորեն երանգավորված՝ նշանակիր: Երկանգամ հակադրության անդամներից մեկի՝ նշանակիր անդամի, ոճական արժեքն ինքնին հասկանալի է, իսկ հակադրության մյուս եզրը՝ ոճական առումով չեզոք անգամը, նույնպես կարող է ունենալ ոճական արժեք, եթե հանդես գա համապատասխան համատեքստում: Իրականում, թե՛ գեղարվեստական, թե՛ առօրյա խոսքում ոճական տեսակետից նշանակիր և չեզոք ձևերն անհնար է զատել, քանի որ դրանք հանդես են գալիս միասին, միմյանց հետ կապված. դեռ ավելին, ոճական առումով չեզոք ձևերը հիմք են դառնում ոճականորեն նշանակիր բառաձևերի իմաստներն ընդգծված արտահայտելու համար: Փաստորեն, դրանք միմյանց հակադրվում են տեքստի ոճական վերլուծությունը մատչելի դարձնելու նպատակով:

Գեղարվեստական գրականության մեջ հեղինակային նորաբանություններն առանձին կարևորություն են ներկայացնում: Դրանք, լինելով քիչ հաճախական, քիչ ենթադրելի, անսպասելի են թվում ընթերցողին, լարում են նրա ուշադրությունը և ավելի ներգործուն դարձնում գեղարվեստական ստեղծագործությունը: Իրականության երևույթները, ինչպես նաև կերպարներն ավելի հանդամանորեն ու պատկերավոր բնութագրելու, ասելիքի արտահայտչականությունն ու գեղարվեստական ստեղծագործության ազդեցությունն ուժեղացնելու նպատակով տեքստում լեզվական համակարգի որևէ միավոր երբեմն հանդես է գալիս իրեն ոչ հատուկ կիրառությամբ: Հեղինակի միջամտությամբ այն ստանում է նրբերանգային, նաև փոխաբերական իմաստներ:

Լեզվաբանական գրականության մեջ հաճախ է խոսվում գեղարվեստական ստեղծագործություններում բառային, շարահյուսական, ձևաբանական մակարդակների միավորների իրավիճակային կիրառությունների անհրաժեշտության մասին, որոնց մասնակի դրսևորումներն են հեղինակային նորաբանությունները: Այսպես՝ չեխ լեզվաբան Մատեզկուսը գտնում է, որ կոնկրետ արտահայտության կախվածությունը իրավիճակից վճռական է, հաճախ միակ մոմենտը, որը բնորոշում է հուզականը լեզվական միավորի իմաստում⁷: Իսկ Լ. Միլիկը գտնում է, որ գեղարվեստական ստեղծագործության մեջ լեզվական նորմայի խախտումով, որը սակայն չի նշանակում լեզվական համակարգի

⁷ Б. Матезнус, Язык и стиль («Пражский лингвистический кружок», М., 1967, с. 459).

վղացվում ավելի խտացված ներկայացնել գույները և շոշափելի, տեսանելի դարձնել նկարագրվող առարկան, երևույթը Այսպես՝ Հ. Շիրազը, Արագածի հավերժական ձյուններով պատած լինելը բնութագրելու համար, ստեղծել է ձյունամուրում բառը.

Արագածը իմ վիթխարի

Ձյունամուրում պապն է բարի (ՀԵ, ԲԶ, էջ 224)։

Մի այլ բաձաստեղծական պատկերում, կիրառելով ձյունաթարթիչ բառը, բանաստեղծը ավելի շոշափելի է դարձրել Սիփան սարի ձնհալի նկարագիրը՝

Ձյունաթարթիչ թագ աչքերից աղբյուրներ է հանում նա,

Որ Վանա ծով իր թագուհին երբեք ծարավ չմնա (ՀԵ, Սև, 6)։

Պատճառաբանված ու սրդարացված է նաև անեղալու բառի ստեղծումը, որով Հ. Շիրազը ցանկացել է մեկ բառի մեջ խտացնել, ամփոփել իր ժողովրդի ողբերգությունը, որից բանաստեղծի մեծ սիրտը կիսվել է, կուչ եկել ու դարձել մի բուռ.

Էն ծովի պես իմ սիրտը մեծ,—

Հապա ինչու՞ մնաց մի բուռ՝

Հատաելով անեղալու (ՀԵ, ԲԶ, 71)։

«Տիեզերական» բանաստեղծության մեջ ստեղծված է աստղակույս ածականը, որը ներդաշնակ է համատեքստին։ Փառաբանելով տիեզերագիտության հաջողությունները՝ հեղինակը հույս է հայտնում, որ կգա օրը, երբ տիեզերքն այնքան մատչելի կդառնա մարդուն, որ ինքը կկարողանա այնտեղ որոնել իր բախտի կորած աստղը և աստղակույս հարսնացուին.

Կգա օրը, արծաթի տեղ ոսկի գոտի պիտի կապենք՝

Անգամ Մարսի կրճին պիտի նոր խնդության վարդեր թափենք։

Որ ես պիտի կորած բախտիս աստղը գտնեմ, որ համբուրեմ,

Իմ աստղակույս հարսնացուին Մարսից դեպի գիրիս բերեմ (ՀԵ, ԲԶ, 379)։

Թվում է, թե ավելի կատարյալ բնորոշում հնարավոր չէ գտնել հարսնացուի եթերային լինելն արտահայտելու համար, քան հիշյալ բառը։

Մտքի խորության, զգացմունքների անարատության վրա խարսխված ժողովրդական պատկերավոր լեզվամտածողության պահանջով են ստեղծված եղեկանույշ, եղեկատու, սիրախանդ, թխավառդ, մաւմնատանջիկ, փրփրաւնուր, լիլուսմասե, վաւամայր, սիրածով, երկնափիրուզ և այլ բառերը, որոնք մեծ մասամբ Հ. Շիրազն օգտագործել է իր հերոսներին բնութագրելու համար։

Նման բառաստեղծումը հատուկ է նաև Պ. Սեափին։ «Անլուծի զանգակատուն» պոեմում հանդիպում ենք տրամաբանդես, ամենահայ, ամենահայր, գիեհաբույց, սիրաղու և մի շարք այլ բառերի։

Ամենամեծ՝ զո։ նախտակ, ամենաճայր, ամենահայ,

Գիտ. կարասն՝ ուրիշներին, մեղ հերիք է քո մի թաղը (ՊՍ, ԱԶ, 1)։

Արագածի, Արարատի

Հայացքի դեմ սղավոր,

Սև տուֆակերտ մի պատի
Տրտմահանդես դահլիճում
Պառկած էր նա... (ՊՍ. ԱԶ. 260):

Մի դեպքում ամենաճայր, ամենաճայ ածականներով հեղինակը Կոմիտասի մեծությունն ու մարդկայնությունն է ընդգծում, մյուս դեպքում՝ տրտմահանդես բառով արտահայտում է իր անզուգական զավակին կորցրած ժողովրդի ողբերգությունը:

Ինչպես տեսնում ենք, բառաստեղծումը բանաստեղծության անբաժանելի բաղադրամասն է և հաճախ պատկերը հնարավոր չէ ընկալել առանց նորակազմ բառի, իսկ եթե դրան էլ ավելացնենք, որ նման բառերն ապահովում են նաև բանաստեղծության հնչեղությունն ու մեղեդայնությունը, ապա նշված բառերի անհրաժեշտությունն ավելի ակնհայտ կլինի:

Այժմ տեսնենք, թե նորմայի ինչպիսի շեղումներ են կատարվում հեղինակային նորաբանություններում:

Ամենա գերադրականի ցուցիչը ամենաճայր բառում դրվել է գոյականի վրա, որը բնորոշ չէ ժամանակակից հայերենին. սովորաբար այն դրվում է որակական ածականի վրա և արտահայտում որևէ հատկանիշի ամենաշատ լինելը¹²: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, այն ստացել է միանգամայն անօրինակաբան կիրառություն՝ ստեղծելով ձևաբանական շեղում: Իսկ սիրածով, սիրախիճ, աստղակույս, ձյունաթաթիչ, տրտմահանդես, անեղալուռ և այլ բառերում կատարված է բառակազմական խախտում: Այսպես՝ սիրածով բարդության սեր և ծով բաղադրիչներն իրենց իմաստներով համադրելի չեն. նույնը կարելի է ասել նաև տրտում և հանդես, աստղ և կույս, ձյուն և թաթիչ և այլ բաղադրիչների մասին:

Նորակերտ բառերն ավելի շատ հանդիպում են բանաստեղծական խոսքում: Գեղարվեստական, լրագրային, խոսակցական ոճերը հանդուրժում են անհատական լեզվական ձևեր, իսկ պաշտոնական, գիտական ոճերում քիչ են հանդիպում նման նորաբանություններ:

Ամփոփելով խոսքը հեղինակային նորաբանությունների մասին, կարելի է ասել, որ բոլոր դեպքերում դրանց նպատակը պետք է լինի ծգնել ընթերցողին խորացնելու կյանքի ճանաչողությունը, ընկալելու գեղեցիկը, ապրումի անկեղծությունը՝ ձգտելով արտահայտչական պարզության, որը եղել և մնում է գեղարվեստական ստեղծագործության գերագույն նպատակը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԾ, ՍԽ—Հովհաննես Շիրազ, Սիամանթո և Խեզսարե, Երևան, 1970:

ՀԾ, ՔՀ—Հովհաննես Շիրազ, Փնար Հայաստանի, Երևան, 1953:

ՊՍ, ԱԶ—Պարույր Սևակ. Անունի զանգակատուն, Երևան, 1966:

12 Ա. Պ ա ո յ ա ն, Պարույր Սևակի շփոթոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 101:

АВТОРСКИЕ НЕОЛОГИЗМЫ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ
ЗНАЧЕНИЕ

РОЗА МКРТЧЯН

Резюме

Ситуативное употребление языковых единиц, которое в определенных случаях представляет собой целенаправленное и допустимое отклонение от нормы, в значительной степени способствует усилению их выразительности. В этом процессе могут участвовать единицы разных уровней языка: фонетического, лексического, морфологического и синтаксического. Особенно богатыми стилистическими возможностями обладают единицы лексического уровня, среди которых важное место занимают авторские неологизмы. Такие неологизмы, как ситуативные употребления языковых единиц, насыщены и маркированы в отличие от традиционных форм, которые в подобных случаях стилистически нейтральны.